

կարտոֆիլի բավարար շահութաբերությունը Լոռու մարզում: Այսպես, մեկ ցենտներից շահույթը կազմեց / 10.0-7.1 / 2.9 հազ. դրամ, ինչը ապահովեց շուրջ 40 % շահութաբերություն:

Բերված հաշվարկները ցույց են տալիս, որ կարտոֆիլը Հայաստանում ընդհանրապես, Լոռու մարզում մասնավորապես, իրոք հանդիսանում է շահութաբեր մշակաբույս: Եթե այն շահութաբեր է արտադրության այդպիսի ապակենտրոնացվածության ու ցածր բերքատվության պայմաններում, ապա կարելի է վստահորեն կանխատեսել, որ արտադրության նորմալ համակենտրոնացման ու բավարար բերքատվության պարագայում կարտոֆիլը արտադրության տնտեսական արդյունավետության առումով կլինի անհասանելի մյուս ճյուղերի համար:

Այստեղից բխում է այն եզրակացությունը, որ կարտոֆիլաբուծության զարգացումը Հայաստանում արժանի է առանձնահատուկ ուշադրության: Անհրաժեշտ է մշակել կարտոֆիլաբուծության զարգացման ազգային ծրագիր, նախատեսելով խոշոր ապրանքային, տեխնոլոգիական բարձր մակարդակով վարվող արտադրություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածաշրջանում Հայաստանը միակ երկիրն է, որ ունի և կարող է ավելացնել կարտոֆիլի արտահանման ռեսուրսներ, ծրագրում պետք է նախատեսել այդ գործի կազմակերպման մեխանիզմները:

Այնուհետև, Հայաստանը ամեն տարի ներմուծում է մինչև 180-190 տոննա կարտոֆիլ օսլա, մեծ քանակությամբ չափսեր:

Ըստ երևույթին անհրաժեշտ է ուսումնասիրել Հայաստանում կարտոֆիլի արդյունաբերական վերամշակման խնդիրը և դրական արդյունքի դեպքում ձեռնարկել այդ գործը:

Հայաստանում կարտոֆիլագործությունը գյուղատնտեսության առավել հեռանկարային ճյուղերից մեկն է և այն արժանի է պետական հատուկ ուշադրության:

ՄԵՐ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի վարչության պետ

ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՆԱՅԻՏ ԱՂԱՆԱԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոբանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՅԵՈՒՅՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Ջուրը մարդու կյանքի կարևորագույն պահանջմունքներից է և տնտեսական հասկացության արդյունք: Բոլոր երկրներում կառավարությունները պատասխանատվություն են կրում հասարակության բոլոր անդամներին անվտանգ ջրի հասանելիության համար: Նկատի ունենալով բնակչության ցածր վճարունակությունը և ջրային տնտեսության զարգացման հրամայականը՝ անհրաժեշտություն է առաջանում պետական բյուջեից հատկացնել լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ բնակչության խոցելի խմբերին աջակցության և սոցիալական քաղաքականության ապահովման, ինչպես նաև ջրամատակարար կազմակերպություններին աջակցելու նպատակով:

1. Սոցիալական օգնության ծրագրերի մշակման ժամանակ պետությունը պետք է բնակչությանը խմելու ջրի օգտագործման որոշակի աջակցության նպատակով պահպանի ջրօգտագործողների հարաբերություններում սոցիալական աջակցությունը, պետք է ապահովի անհրաժեշտ ֆիզիոլոգիական և հիգիենիկ պահանջներին համապատասխան ջրի հավասար մատչելիություն:
2. Սոցիալական աջակցության համակարգը պետք է լինի հասցեական, այսինքն՝ սոցիալական աջակցություն պետք է տրվի այն բնակիչներին, ովքեր դրա կարիքն ունեն:
3. Սոցիալական աջակցության համակարգը պետք է լինի արդյունավետ, այսինքն երաշխավորի սպառման բավարար նվազագույն մակարդակ անվճարունակ ընտանիքներին:
4. Սոցիալական աջակցության համակարգը պետք է լինի իրատեսական, այսինքն ֆինանսապես հիմնավորված՝ ելնելով բյուջեի իրական հնարավորություններից:
5. Սոցիալական աջակցության համակարգը վարչական կառավարման տեսանկյունից պետք է լինի պարզ և ոչ թանկ, ինչպես նաև վերահսկողության համար թափանցիկ և հասանելի: Բնակչության համար սոցիալական պաշտպանության բոլոր միջոցառումների անցկացման պատասխանատվությունը պետք է ընկնի պետության վրա:
6. Սոցիալական աջակցությունը պետք է նպաստավոր նախապայմաններ ստեղծի ջրի տնտեսվար օգտագործման համար:
7. Սոցիալական աջակցությունը պետք է նպաստի հասարակությունում սոցիալական լարվածության նվազեցմանը՝ հանգեցնելով շուկայական տնտեսությանը խոչընդոտող արդյունքներին: Սկզբունքները.

Սոցիալական աջակցության միջոցառումները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝

- ա) միջոցառումներ, որոնք ուղղված են քիչ վճարունակ տնային տնտեսությունների համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց վճարների նվազեցմանը,

բ) միջոցառումներ, որոնք ուղղված են քիչ վճարունակ տնային տնտեսությունների եկամուտների ավելացմանը: Նախկինում Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրները¹ հիմնականում օգտագործել են առաջին խմբի մեխանիզմները՝

ա) ջրամատակարար ընկերություններին պետական դոտացիաների և սուբսիդիաների տրամադրում,

բ) խաչաձև սուբսիդիաների տրամադրում, որի դեպքում բնակչությունը սուբսիդավորվում է արդյունաբերական ձեռնարկությունների հաշվին,

գ) որոշակի խմբերի բնակչության համար ցածր սակագների սահմանում:

Ծառայությունների դիմաց չվճարման (կամ թերվճարման) առկա գործընթացը մույնպես կարող է դիտարկվել որպես անուղղակի սուբսիդավորում: Շուկայական տնտեսության անցման պայմաններում կառավարությունները բախվեցին բյուջետային միջոցների կրճատման և սոցիալական աջակցության կազմավորման անհրաժեշտության հետ:

Հիմնականում նպատակ ունենալով կրճատել ջրամատակարարման ու ջրահեռացման ուղղված բյուջետային միջոցները՝ բազմաթիվ պետություններ որոշել են հրաժարվել պետական բյուջեից ջրային տնտեսությանն ուղղված բյուջետային ֆինանսավորումից (այսինքն հարկատուների հաշվին ֆինանսավորումից) և անցնել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց սպառողների ֆինանսավորմանը:

Երկրի տնտեսության զարգացմանը, ինչպես նաև, բնակչության վճարունակության բարձրացմանը զուգընթաց՝ երկրները վարում են սակագների բարձրացման և պետական բյուջեից սուբսիդիաների կրճատման կամ խստորեն վերացման քաղաքականություններ:

Շատ երկրներում պետական բյուջեն ի վիճակի չէ պետական սուբսիդիաների (կամ դոտացիաների) հաշվին պահպանել ջրամատակարարման և ջրահեռացման ցածր գները բոլոր սպառողների համար: Միաժամանակ բյուջետային ֆինանսավորումը պետք է հետագայում ևս կարևոր դեր խաղա այդ ոլորտի ֆինանսավորման համար: Շուկայական տնտեսության ոլորտներում կարևոր են հետևյալ պայմանները.

ա) իրականացնել պետական բյուջեից ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտին սահմանափակ ֆինանսավորում, մշակել այդ ֆինանսավորմանը հատուկ ռազմավարական ուղղություն,

բ) սակագների սահմանման պատասխանատու մարմիններին պարտավորեցնել փոխհատուցել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ինքնարժեքի և սակագնի տարբերությունը (հիմնականում սակագնի հաշվին),

գ) բնակչությանը մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համար սահմանել ցածր կամ գրոշակալ ավելացված արժեքի հարկ:

Արդյունաբերական և կենցաղային սպառողների միջև խաչաձև սուբսիդավորումը կոմունալ ծառայությունների ոլորտում բերում է նշանակալից խեղաթյուրման, և այդ առումով ներկայումս այդ քաղաքականությունից աստիճանաբար հրաժարում է տեղի ունենում: Ընդհանուր առմամբ դա դրական միտում է, սակայն խաչաձև սուբսիդավորման չեղյալ հայտարարելը պետք է իրականացվի աստիճանաբար՝ հաշվի առնելով բնակչության հնարավորությունները՝ ամբողջությամբ վճարելու ծառայությունների մատուցման լրիվ ինքնարժեքը և ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների ֆինանսական կենսունակության բարելավումը: Բարձր վճարունակ տնային տնտեսությունների հաշվին ցածր վճարունակ սպառողների խաչաձև սուբսիդավորումը նախընտրելի մեթոդ է, եթե այդ դեպքում չեն առաջանում անցանկալի տնտեսական և բնապահպանական հետևանքներ:

Բազմաթիվ երկրներում դեռևս շարունակվում է բնակչության և կոմունալ ծառայությունների վճարման արտոնությունները: Այսինքն՝ որոշակի խմբերի քաղաքացիներին իրենց սոցիալական և աշխատանքային գործունեությունից ելնելով՝ կոմունալ ծառայությունները հատուցվում են ցածր գներով կամ անվճար: Չնայած արտոնություն ստացողների մեջ անապահով քաղաքացիների առկայությունը՝ այդ արտոնությունները նպատակային չեն ծառայում և մեծամասամբ չեն կարող տնտեսապես և սոցիալապես արդարացված լինեն: Սակայն արտոնությունների չեղյալ հայտարարելը հանգեցնում է քաղաքական դիմադրության, մույնիսկ այն դեպքում, երբ բյուջեն ի վիճակի չէ ֆինանսավորել այդ ծրագրերը:

Հայաստանում ևս առկա է մնանադիմա գործընթաց: Մասնավորապես ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 8-ի N 251 որոշման (որը բազմաթիվ փոփոխությունների ու լրացումների է ենթարկվել) երկրորդ կետով նախատեսված է, որ ջրամատակարարման, ջրահեռացման, աղբահանման, ինչպես նաև հեռախոսի և ռադիոյի բաժանորդային վարձի 50 տոկոս գեղչով վճարման իրավունքից օգտվում են նախկին ԽՍՀՄ հերոսները, սոցիալիստական աշխատանքի հերոսները, Հայաստանի ազգային հերոսները, Մարտական խաչի 1-ին և 2-րդ աստիճանի և «Փառքի» երեք աստիճանի շքանշաններով պարգևատրված անձինք, ինչպես նաև անհատական կենսաթոշակառուները: Ընդ որում, շահութահարկի մասին օրենքի 52.1-րդ հոդվածով նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի հաշվետու տարվա շահութահարկի, իսկ օրենքով սահմանված դեպքերում և կարգով շահութահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարողների համար՝ հաստատագրված վճարի հաշվետու ամսվա գումարը նվազեցվում է առանձին խմբերի քաղաքացիներին օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում ՀՀ կառավարության սահմանած՝ գեղչ սակագներով կամ անվճար մատուցված ծառայությունների հետևանքով չստացված եկամուտների գումարի չափով, բացառությամբ, եթե հաշվետու տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով տվյալ հարկ վճարողի համար նախատեսված է սուբսիդիայի հատկացում:

¹ Доступность услуг, социальная защита и участие общественности в процессе реформирования сектора водоснабжения и канализации в странах Восточной Европы, Кавказа и Центральной Азии: Ключевые аспекты и рекомендации, OECD 2003, стр. 14:

Տվյալ դեպքում էապես կարևորվում է մաս Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, այսինքն սուբսիդիաների տրամադրումը ոչ թե կազմակերպություններին, այլ բնակչության սոցիալապես անապահով խավին՝ տարբեր սոցիալական ծրագրերի միջոցով:

Բնակչությանը սուբսիդավորման մեկ այլ տարատեսակ է մաս ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց առաջացած դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների վերականգնումները:

Ջրային ոլորտի ընկերությունների ֆինանսական առողջացման և արդյունավետ ֆինանսական կառավարում իրականացնելու տեսանկյունից խիստ կարևորվում է առաջին հերթին նրանց պարտքերի վերականգնումը և նախորդ տարիների բեռից ազատումը, ինչի լույսի ներքո մաս կուտակված դեբիտորական և կրեդիտորական պարտքերի խնդրի լուծումը: Դրան նպաստեց 2002թ. նոյեմբերի 6-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Խմելու ջրի մատակարարման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը: Համաձայն 2002թ. նոյեմբերի 6-ի և 2003 թվականի հոկտեմբերի 22-ին փոփոխությունների ենթարկված արտոնություններ սահմանելու մասին օրենքի՝ վերջինս ուժի մեջ մտնելու պահից մինչև 2004թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում պարտքերի վերահաշվարկման և մարման պայմանագիր կնքած խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների բաժանորդներն ազատվում են նշված ծառայությունների գծով իրենց պարտքերի մի մասի վճարման պարտականությունից: Ընդ որում, պայմանագրի կնքման դեպքում մինչև 2000թ. կուտակված պարտքերը ենթակա էին զիջման ամբողջությամբ, իսկ դրանից հետո ընկած ժամանակահատվածի (մինչև 2002թ. դեկտեմբերի 9-ը) պարտքերը զիջվում էին ժամային գրաֆիկի և շուրջօրյա ջրամատակարարման դեպքում համապատասխանաբար 70 կամ 50 տոկոսով՝ պայմանով, որ պայմանագրի կնքման օրվանից 6-ամսյա (վերջին ժամկետը՝ մինչև 2004թ. հուլիսի 1-ը) ժամկետում պայմանագիր կնքած բաժանորդը պարտաճանաչ կերպով վճարել արտոնությունների տրամադրման արդյունքում վերահաշվարկված պարտքի վճարման ենթակա մասը, ինչպես նաև վճարել մատուցված ընթացիկ ծառայությունների դիմաց: Օրենքի կիրարկման արդյունքում խմելու ջուր օգտագործողների պարտքի ճշգրտված գումարից ավել վճարված մասը համարվում է կանխավճար՝ հետագայում մատուցվելիք ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների դիմաց:

Օրենքն աղքատության ընդունեկան նպաստ ստացող բաժանորդների համար առավել արտոնյալ պայմաններ էր նախատեսում՝ մասնավորապես, պարտքերի զիջման ավելի բարձր հարաբերակցություն, ջրաչափական սարքի ձեռքբերման և տեղադրման արժեքների վճարման երկարաժամկետ սցենար և որոշակի այլ արտոնություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության որոշումն ընդունվել է 2002թ. դեկտեմբերին, ըստ էության, հիմնական աշխատանքներն սկսվել են 2003թ. հունվարի 2-րդ կեսից, որի ընթացքում կնքվել է խմելու ջրի ծառայությունների գծով պարտքերի մարման 499672 պայմանագիր: Մինչև ժամանակ, պետք է նշել, որ ամբողջ գործընթացի իրականացման արդյունքները կախված են ոչ միայն պայմանագրերի կնքման փուլի հաջող իրականացումից, այլ նաև բաժանորդների կողմից դրանցից բխող պարտավորությունների պարտաճանաչ կատարումից, քանի որ օրենքով ամրագրված արտոնություններն ամբողջ ծավալով դառնում են կիրառելի միայն վերահաշվարկված պարտքերի մարման և մատուցված ընթացիկ ծառայությունների դիմաց պարտաճանաչ վճարումների իրականացման դեպքում:

Ըստ խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տվյալների՝ 2002թ. դեկտեմբերի 9-ի դրությամբ բնակչության գծով դեբիտորական պարտքերի մնացորդը Երևանի «Ջրմուկ-կոյուղի» և «Հայջրմուկկոյուղի» ՓԲԸ-ներում կազմել է 39815793.4 հազար դրամ, որին համապատասխան հետաձգված ԱԱՀ գումարը կազմել է 5755225.0 հազար դրամ¹:

2002թ. դեկտեմբերի 9-ից մինչև 2004թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում պարտքերի մարման պայմանագիր է կնքել 499672 բաժանորդ (ընդհանուր բաժանորդների 74 տոկոսը), որոնց պարտքը կազմում է 30124678.4 հազար դրամ: Պայմանագրերի կնքման ընթացքում մատուցված ծառայությունների ծավալների ճշգրտման արդյունքում պայմանագիր կնքած բաժանորդների պարտքն ավելացել է 465834.8 հազար դրամով և նվազել 916085.4 հազար դրամով: Վճարումների ճշգրտման արդյունքում պարտքն ավելացել է 18878.4 հազար դրամով և նվազել 43822.4 հազար դրամով: Իրավահաջորդ չունեցող բաժանորդների պարտքը կազմել է 1659900.0 հազար դրամ:

Աղյուսակ 1.

Խմելու ջրի գծով դեբիտորական պարտքերի կառուցվածքն ըստ ընկերությունների


Ջրամատակարար ընկերության անվանումը	Բնակչությանը մատուցված ծառայությունների գծով դեբիտորական պարտքն առ 09.12.2002թ., հազար դրամ	Ընդհանուրի մեջ տեսակարար կշիռը (%)	Բաժանորդների քանակը	Ընդհանուրի մեջ տեսակարար կշիռը (%)
Երևանի Ջրմուկ-կոյուղի ՓԲԸ	24206170.0	60.8 %	302328	45.3 %
Հայջրմուկկոյուղի	15609623.4	39.2 %	364892	54.7 %
Ընդամենը	39815793.4	100 %	667220	100 %

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության 25.11.2004թ. «Խմելու ջրի մատակարարման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործընթացների կիրարկման արդյունքներն ամփոփելու մասին» N 1316-Ն որոշում:

Աղյուսակ 1-ից երևում է, որ երկու ընկերություններում բաժանորդների գրեթե հավասար քանակի դեպքում դերիտորական պարտքերի գերակշռող մասը՝ մոտ 61 տոկոսը, բաժին է ընկնում Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ին: Այնքանաքանակ, դա հետևանք է այն բանի, որ նախորդ տարիներին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի վճարների հավաքագրման մակարդակը, որպես կանոն, բարձր է եղել Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի հավաքագրման մակարդակից:

Առավել հատկանշական է պայմանագիր կնքած բաժանորդների պարտքի տեսակարար կշիռն ընդհանուր պարտքի մեջ: Այսպես, պայմանագիր կնքած բաժանորդների դերիտորական պարտքը կազմել 30124678.4 հազար դրամ կամ ընդհանուր պարտքի 75.66 տոկոսը, պայմանագիր չկնքած բաժանորդների պարտքը՝ 8031215.0 հազար դրամ կամ ընդհանուր պարտքի 20.17 տոկոսը, իսկ իրավահաջորդ չունեցող բաժանորդների դերիտորական պարտքը՝ 1659900.0 հազար դրամ կամ ընդհանուր դերիտորական պարտքի 4.17 տոկոսը: Այսպիսով, այս երկու ընկերությունների ամփոփված տվյալների համաձայն՝ պայմանագիր կնքած և չկնքած բաժանորդների դերիտորական պարտավորությունների հարաբերակցությունը մոտ է դրանց համապատասխան քանակների հարաբերակցությանը, ինչի մասին վկայում է նաև ստորև ներկայացված գրաֆիկը: Պայմանագիր կնքած բաժանորդների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ կազմում է 74 տոկոս, և մոտավորապես նույն կշիռն ընդհանուրի մեջ ունեն նրանց դերիտորական պարտքերի ընդհանուր գումարները՝ 78.7 տոկոս:


Համաձայն կնքված պայմանագրերի ամփոփ տվյալների՝ արտոնությունների տրամադրման արդյունքում նշված պարտքից պայմանագիր կնքած բաժանորդների կողմից պետք է մարվեր 3851963.2 հազար դրամ (ճշգրտված պարտքի մոտ 13 տոկոսը) և դուրս գրվեր 25870834.4 հազար դրամ կամ ընդհանուրի մոտ 87 տոկոսը: Դուրսգրման ենթակա պարտքերի տեսակարար կշիռը բավականին մեծ է, բանի որ մինչև 2000 թվականի հունվարի 1-ը մատուցված ծառայությունների դիմաց գոյացած պարտքը ամբողջությամբ պետք է դուրս գրվի (14510777.6 հազար դրամ):



Գրաֆիկ 1. Պայմանագիր կնքած և չկնքած բաժանորդների քանակի և նրանց պարտքերի հարաբերակցությունը

Միևնույն ժամանակ, բաժանորդների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման արդյունքում պետք է ձևակերպվեր 1506998.0 հազար դրամ կանխավճար:

Մարման ենթակա 3851963.2 հազար դրամ պարտքի գումարից բաժանորդների կողմից վճարվել է 2860966.1 հազար դրամ կամ 74.3 տոկոսը, մինչդեռ, կնքված պայմանագրերի համաձայն՝ նախատեսվող 1506998.0 հազար դրամ կանխավճարից ձևակերպվել է 1158907.5 հազար դրամ կամ նախատեսվածի 76.9 տոկոսը: Պայմանագրային պարտավորությունների կատարման արդյունքում դուրս գրված պարտքերի գումարը կազմել է 22187115.9 հազար դրամ կամ պայմանագրերի կնքման արդյունքում դուրսգրման ենթակա 25870834.4 հազար դրամի մոտ 85.8 տոկոսը:



Գրաֆիկ 2. Պայմանագրային պարտավորությունների կատարման արդյունքում դուրս գրված, վճարված, ձևավորված կանխավճարների վերաբերյալ

Այսպիսով, արտոնությունների տրամադրման գործընթացի արդյունքում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատով բնակչության առկա 39815793.4 հազար դրամ պարտքից վճարվել է 2860966.1 հազար դրամ կամ բնակչության գծով պարտքերի մոտ 7.2 տոկոսը, դուրս է գրվել 22187115.9 հազար դրամ կամ պարտքի մոտ 55.7 տոկոսը, և ճշգրտումների արդյունքում պարտքը

նվազել է մոտ 1.2 տոկոսով, դուրս գրված իրավահաջորդ չունեցող բաժանորդների դեբիտորական պարտքը կազմել է 1659900.0 հազար դրամ կամ ընդհանուր պարտքի մոտ 4.2 տոկոսը: Հուլիսի 1-ի դրությամբ արտոնությունների տրամադրման ժամանակահատվածին վերաբերվող բնակչության գծով ընկերությունների հաշվեկշիռներում առկա պարտքը կազմում է 12632616.8 հազար դրամ (մոտ 31.7 տոկոս):

Ստորև բերված աղյուսակ 2-ն ամփոփում է 2004թ. հուլիսի 1-ի դրությամբ օրենքի կիրարկման հետ կապված ընկերությունների կրած վնասները:

Աղյուսակ 2.

Արտոնությունների տրամադրման օրենքի կիրարկման գործընթացի արդյունքում խմելու ջուր մատակարարող ընկերությունների վնասները, հազար դրամ

Ընկերություններ	Դուրս գրված գումարներ	Ձևակերպված կանխավճարներ	Դուրս գրված հարկային պարտավորությունների գծով եկամուտ	Պարտքերի վճարման գումարներ	Ընդամենը վնաս 5=1+2-3-4
Երևանի Ջրմուղ-կոյուղի	14504615.9	609085.5	2717937.0	2514609.1	9881155.3
Հայջրմուղկոյուղի	7682500.0	549822.0	915541.4	346357.0	6970423.6
Ընդամենը	22187115.9	1158907.5	3633478.4	2860966.1	16851578.9

Ընդհանուր առմամբ, մինչև 2004թ. հուլիսի 1-ը տեղադրվել է 220154 ջրաչափ սարք, որի գերակշիռ մասը՝ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի բաժանորդների մոտ (187160 ջրաչափական սարք), մինչդեռ «Հայջրմուղ-կոյուղի» ՓԲԸ դեպքում ջրամատակարարի միջոցների հաշվին տեղադրվել է մոտ 32994 ջրաչափ սարք:

2004թ. հուլիսի 1-ի դրությամբ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների խմելու ջրի 675066 բաժանորդներից ջրաչափ սարք են տեղադրել 461581 բաժանորդ կամ բաժանորդների 68.4 տոկոսը (անկախ օրենքի կիրարկումից):

Կրեդիտորական պարտավորությունների վերաբերյալ նշենք, որ «ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 20-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարությանը թույլատրվել է ջրային տնտեսության ընկերությունների պարտավորությունների մարման նպատակով ձեռք բերել Երևանի «Ջրմուղ-կոյուղի», «Հայջրմուղկոյուղի» և «Ռոռգում-ջրառ» ՓԲԸ-ների լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի պետական բաժնեմասը՝ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի գծով՝ 10312000 հազ.դրամ, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գծով՝ 4609000 հազ.դրամ և «Ռոռգում-ջրառ» ՓԲԸ-ի գծով՝ 2630000 հազ.դրամ: Նշված գործողությունների իրականացման նպատակով «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին թույլատրվել է 2003 թվականի բյուջետային տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությանը մեկ օրով տրամադրել անտոկոս վարկեր: Միաժամանակ «Երևանի «Ջրմուղ-կոյուղի», «Հայջրմուղկոյուղի» և Ռոռգում համակարգերի փակ բաժնետիրական ընկերությունների ֆինանսական առողջացման ծրագրի և 2003-2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ տրվել է վերը նշված հարցի լուծման սխեմատիկ ուղղագիծը:

Վերը նշված օրենքի և ՀՀ կառավարության որոշման պահանջների համաձայն՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ջրտնտեսությունների, Երևանի քաղաքապետի և մի շարք պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների միջև կնքվել է «ՀՀ ջրային տնտեսության համակարգի փակ բաժնետիրական ընկերությունների և «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության («Երևանի էլեկտրատրանսպորտ» պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը) կանոնադրական կապիտալները 18703.0 մլն. դրամ ընդհանուր գումարով ավելացման և ընկերությունների կողմից նույն գումարի չափով ՀՀ պետբյուջեի նկատմամբ պարտավորությունների մարման վերաբերյալ» համաձայնագիրը: Համաձայն նշված համաձայնագրի 2-րդ կետի՝

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը տրամադրում է 2630.0 մլն. դրամ, 4609.0 մլն. դրամ և 10312 մլն դրամ գումարներ, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն դրանց հաշվին համապատասխանաբար ապահովում է «Ռոռգում-ջրառ», «Հայջրմուղկոյուղի» և Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ների կանոնադրական կապիտալների ավելացումները և միաժամանակ այդ գումարների ուղղումը.

ա) «Ռոռգում-ջրառ» ՓԲԸ-ի մասով՝ ընկերության կողմից սպառված էլեկտրաէներգիայի դիմաց «Հայգազարդ» ՓԲԸ-ի նկատմամբ կուտակված պարտքի մարմանը,

բ) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասով 2457.0 մլն.դրամ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի նկատմամբ գնովի ջրի դիմաց պարտավորությունների վճարմանը և 2152.0 մլն.դրամ՝ ընկերության կողմից սպառված էլեկտրաէներգիայի դիմաց «Հայգազարդ» ՓԲԸ-ի նկատմամբ կուտակված պարտքերի մարմանը,

գ) Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի մասով՝ 7084.0 մլն. դրամ ընկերության կողմից սպառված էլեկտրաէներգիայի դիմաց «Հայգազարդ» ՓԲԸ-ի նկատմամբ կուտակված պարտքերի մարմանը, 1169.0 մլն. դրամ բնապահպանական վճարի գծով պարտավորության մարմանը, մնացորդի (2059.0 մլն. դրամ) և արձանագրության 2.2 կետի համաձայն՝ գնովի ջրի դիմաց ստացած գումարի (2457.0 մլն. դրամ) հանրագումարի՝ 4516.0 մլն. դրամի հաշվին ընկերությանը տրված բյուջետային վարկի մայր գումարի գծով պարտավորության մարմանը:

Վերը նշված գործողություններն իրականացնելու նպատակով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը սույն թվականի դեկտեմբերի 11-ին Երևանի «Ջրմուղ-կոյուղի», «Հայջրմուղկոյուղի» և «Ռոռգում-ջրառ» ՓԲԸ-ներին հանձնարարություն է արձակում իրականացնելու նշված գործողությունները:

ջրառ» ՓԲԸ-ներին հատկացրել է նշված գումարները, իսկ այդ ընկերությունները ՀՀ ջրամատակարարության վերահսկողությամբ ապահովել են նշված գումարների փոխանցումը համապատասխան հասցեատերերին:

Հաշվանցումն ապահովելուց հետո լրացուցիչ (հասարակ) բաժնետոմսերի թողարկելու եղանակով ավելացվել է Երևանի «Ջրմուղ-կոյուղի», «Հայջրմուղկոյուղի» և «Ոռոգում-ջրառ» ՓԲԸ-ների կանոնադրական կապիտալների չափերը՝ տրված գումարների շրջանակներում՝ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի մասով՝ 10311994251 դրամով, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասով՝ 4609000000 դրամով, իսկ «Ոռոգում-ջրառ» ՓԲԸ-ի մասով՝ 2629995992 դրամով: Կանոնադրական կապիտալների ավելացումները «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն պետք է իրականացվի բաժնետերերի ընդհանուր ժողովների հիման վրա:

Պարտավորությունների և թերվճարումների խնդիրը պետք է լուծվի քաղաքական մակարդակով՝ բոլոր սպառողների համար հավասար պայմաններ ստեղծելու նախադրյալներով:

Խմելու ջրի մաքրման և ջրահեռացման ոլորտում առանց պետական աջակցության հնարավոր չէ իրականացնել համապատասխան բարեփոխումներ, ինչպես նաև ունենալ զարգացման միտումներ: Այդ ամենը պետք է ուղեկցվի համապատասխան քաղաքական կամքով և օրենսդրական դաշտի առկայությամբ: Խմելու ջրի մաքրման և ջրահեռացման ոլորտի պետական ֆինանսական աջակցության օրենսդրության առկայության անկյունաքարը հանդիսացավ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի¹ 81-րդ հոդվածի՝ ջրային հարաբերություններում կարող է տրամադրվել ֆինանսական օգնություն՝ սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունների տրամադրման տեսքով՝ կախված ջրի ազգային ծրագրում ամրագրված ֆինանսական օգնության տրամադրման կոնկրետ ձևից: Ընդ որում, կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծով ՀՀ Ազգային ժողովի հաստատմանը պետք է ներկայացնի ջրամատակարարներին և ջրօգտագործողներին պետական բյուջեից տրվող սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունների չափերը: Միաժամանակ պետական բյուջեից տրվող սուբսիդիաները կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունները պետք է սահմանվեն այնպես, որպեսզի նպաստեն ջրային համակարգերի պահպանման և տեխնիկական սպասարկման ծախսերի հատուցմանը:

Նշված օրենսգրքով սահմանված սուբսիդիաները ջրամատակարարներին կամ ջրօգտագործողներին կարող են տրամադրվել ուղղակի վճարումների տեսքով:

Ֆինանսական օգնության տրամադրման ժամանակ հաշվի են առնվում՝ ֆինանսական օգնության տրամադրման նպատակը, հավասարության ապահովումը և խտրականության բացառումը, քաղաքականության ապահովումը, օգնություն ստացողի ֆինանսական վիճակը, ջրային համակարգերի պահպանության անհրաժեշտությունը:

Միաժամանակ ջրային օրենսգրքի պահանջները խախտող անձը օրենսգրքով նախատեսված ֆինանսական օգնություն ստանալու իրավունք չունի:

Կառավարությունը սահմանում է ֆինանսական օգնության տրամադրման կարգը, որը պետք է ներառի՝

- 1) ֆինանսական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց խմբերը,
- 2) ֆինանսական օգնություն ստանալու համար հայտերի (դիմումների) ներկայացման կարգը,
- 3) ֆինանսական օգնության օգտագործման պայմանները և կանոնները:

Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունները անցած տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել են թե՛ ուղղակի սուբսիդավորումների տեսքով, թե՛ կրեդիտորական պարտավորությունների մարման (կամ հաշվանցման) և թե՛ կրեդիտորական պարտավորությունների զիջման (կամ վերականգնման) տեսքով:


Աղյուսակ 3.

2001 թվականից սկսած ստացված սուբսիդիաների չափերը

Ընկերությունների անվանումը	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
«Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ	277	270	1935	756	1202.3	252.3	-	-
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	560	1229	810	952	1366.5	1381.26	1364.5	1213.5
«Նոր Ակունք» ՓԲԸ	-	-	-	211.7	63.53	116.55	79.486	73.486
«Լոռի-ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ	-	-	-	30.6	25.5	19.89	-	-
«Շիրակ-ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ	-	-	-	35.7	25.5	18.87	-	-

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպություններին սուբսիդիաները (աղյուսակ 3) տրվել են ընթացիկ տարվա ֆինանսական հոսքերով պլանավորված ֆինանսական ճեղքվածքի մարման համար: Ընդ որում, ՀՀ պետական բյուջեից հատկացված սուբսիդիաները հիմնականում ուղղված էին ջրամատակարար կազմակերպությունների կողմից ծախսված էլեկտրոհալի գծով ծախսի մարմանը:

¹ ՀՀ պաշտոնական տեղեկագիր 2002/24 (199) 10.07.2002թ.:



Փրաֆիկ 3. «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-րին ըստ տարիների տրամադրված սուբսիդիաները

Տվյալ դեպքում սուբսիդիան ջրամատակարար կազմակերպություններին հատկացվում է ինքնարժեքից ցածր սակագնով՝ ծառայությունների մատուցման ծախսերի փոխհատուցման համար: Ինչպես երևում է աղյուսակից, ըստ տարիների ՀՀ պետական բյուջեից հատկացված սուբսիդիայի չափաքանակներն անկանոն են տեղաբաշխված, որը, մեր կարծիքով, համապատասխան սխալ պլանավորումների արդյունք է եղել: Ընդ որում, ՀՀ պետական բյուջեից ոչ ճիշտ պլանավորման արդյունքում քիչ սուբսիդավորումը համապատասխան կազմակերպությունների մոտ հանգեցրել է կրեդիտորական պարտավորությունների կուտակմանը (որոնք հետագայում դուրս են գրվել կամ վերակառուցվել են):

Եթե մինչև 2003 թվականը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագնի հաշվարկի հիմքում դրված չէր ՀՀ պետական բյուջեից հատկացվող սուբսիդիան, ապա 2005 թվականն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության համար սակագնի հաշվարկի հիմքում դրվել է մաս սուբսիդիան՝ 1364.9 մլն.դրամի չափով, որը պակասեցվել է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ հասույթից: Այսինքն «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի անհրաժեշտ հասույթը շուրջ 30 %-ով նվազեցվել է: Տվյալ դեպքում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին մատակարարվող ջրամատակարարման և ջրահեռացման սակագինը, որը 140 դրամ է, շուրջ 30 %-ով բարձրանալու միտում ունի: Նույնը «Նոր Ակունք» ՓԲԸ-ի մասով է:

Վերջին տարիներին իրականացված միջոցառումների արդյունքում (այդ թվում ցուցանիշների իրատեսական պլանավորման) ՀՀ պետական բյուջեից հատկացվող սուբսիդիաների չափաքանակներն ըստ կազմակերպությունների, ըստ էության, նվազել են, ընդհուպ, որոշ կազմակերպությունների մոտ՝ իսպառ վերացել: Սասնավորապես, «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ին 2006 թվականի առաջին կիսամյակի համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվել և հատկացվել է 252.3 մլն.դրամ սուբսիդիա: Նշված ժամանակահատվածում «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց սակագինը եղել է 125.1 դրամ: 2006 թվականի հունիսի 1-ից «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները մատուցում է «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից շահագործվող ջրային համակարգերը մրցույթով վարձակալության վերցրած ֆրանսիական Ջեներալ Դեգո կազմակերպությունը, որը մասնավոր կազմակերպություն է և, որը նշված ծառայությունների մատուցման համար հիմնադրել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ն: «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ծառայությունները մատուցում է 172.8 դրամ սակագնով (որը առաջիկա 10 տարիների ընթացքում նվազեցման միտում ունի՝ ընդհուպ մինչև 90 դրամ 2016 թվականին) և որին արդեն ՀՀ պետական բյուջեով սուբսիդիաներ չեն տրվում: 2007 թվականից սուբսիդիաներ չեն տրվում մաս «Լոռի-ջրմուղ-կոյուղի» և «Շիրակ-ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերություններին:

Ընդհանուր առմամբ կազմակերպությունների ֆինանսական կենսունակության և բնակչության վճարունակության բարձրացմանը զուգընթաց՝ պետությունը պետք է աստիճանաբար իրաժարվի սուբսիդավորման քաղաքականությունից, կամ էլ սուբսիդավորման մեխանիզմներն իրականացնի հասցեականության բարձրացման հաշվին տարբեր սոցիալական ծրագրերի միջոցով:

ԱՎԵՏԻԷ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նորամուծության և ներդրումային գործընթացների (ՆՆԳ) ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ այդ գործընթացների ծավալը և աճը պայմանավորվում են ներդրումային և նորամուծության ռեսուրսների համալիր օգտագործման պայմաններում, որտեղ զուգորդվում են ՆՆԳ նպատակներն ու խնդիրները: Անկախ նրանից, թե նորամուծության և ներդրումային գործընթացներն ունեն իրենց կազմակերպման, գործունեության և տնտեսական գնահատման մեթոդաբանական հիմքերը, միևնույնն է, դրանք գործում են փոխ-